ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

24-ը ապրիլի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայ մամուլի հիմնադրման օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ մեր երկրում գործող զանգվածային լրատվամիջոցների բոլոր ներկայացուցիչներին: Ժամանակակից աշխարհում արագ փոփոխվող և տարածվող լրահոսը նշանակալից դեր և մեծ ազդեցություն ունի հանրության շրջանում մտածելակերպ, դիրքորոշում և կարծիք ձևավորելու հարցում, ուստի լրատվական բոլոր հարթակներում առաջնային պիտի լինի անաչառ և հավաստի գործելաոճը:

Կարևորելով և գնահատելով հայաստանյան լրատվամիջոցների բարդ և պատասխանատու գործունեությունը՝ առանձնահատուկ շնորհավորում եմ Կոտայք մարզային հեռուստաընկերության ողջ անձնակազմին, որը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում համայնքային նշանակալից իրադարձությունները և պատշաճ կազմակերպում համայնքային միջոցառումների, մեր բնակավայրերում առկա առաջնահերթ հարցերի լուսաբանման աշխատանքները: Գանահատելի է TV-ի մեծ դերը բնակիչ-համայնք կապի ամրապնդման և ստույգ իրազեկվածության ապահովման հարցում:

Լրատվամիջոցների հարգելի՛ ներկայացուցիչներ.

Ձեր արդարամիտ գործունեությունը առանցքային նշանակություն ունի հանդուրժող հասարակության ձևավորման և տարբեր բնագավառներում թափանցիկ ու հաշվետու աշխատելաոճ հաստատելու հարցում:

Կրկին շնորհավորում եմ և մաղթում մասնագիտական հաջողություններ, արդյունավետ և անխափան եթերներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ